



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ 2016
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ը ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ
ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«01» հուլիսի 2016թ.

ք. Ստեփանակերտ, ԼՂՀ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը՝ ի դեմս հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանի, և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը՝ ի դեմս հանձնաժողովի նախագահ Հակոբ Ղահրամանյանի (այսուհետ՝ Կողմեր), ի կատարումն 2014 թվականի հունիսի 27-ի Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի համագործակցության համաձայնագրի, հաստատեցին 2016 թվականի հուլիսի 1-ից մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը ժամանակահատվածի Կողմերի համատեղ աշխատանքային ծրագիրն՝ ըստ հետևյալ ուղղությունների.

1. տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտին առնչվող իրավական ակտերի վերաբերյալ կարծիքների տրամադրում.
2. ՀՀ ՏՄՊՊ և ԼՂՀ ՀԾՏՄԿՊ հանձնաժողովների որոշումների և օրենսդրական ու իրավական ակտերում փոփոխությունների կատարման վերաբերյալ տեղեկատվության փոխանակում.
3. ՀՀ ՏՄՊՊ և ԼՂՀ ՀԾՏՄԿՊ հանձնաժողովների նախագահների, անդամների և աշխատակիցների փոխադարձ այցելությունների կազմակերպում.
4. միջազգային փորձի ուսումնասիրության և փոխանակման նպատակով ՀՀ ՏՄՊՊ հանձնաժողովի արտասահմանյան պատվիրակության կազմում ԼՂՀ ՀԾՏՄԿՊ հանձնաժողովի աշխատակիցների ընդգրկման հարցի քննարկում և հնարավորության դեպքում ընդգրկում պատվիրակության կազմում՝ համաձայն սահմանված ընթացակարգի.

5. տնտեսական մրցակցության քաղաքականության զարգացմանը նպաստող միջազգային իրավասու կառույցների և արտերկրի մրցակցային /հակամենաշնորհային մարմինների կողմից կազմակերպվող միջոցառումներին ԼՂՀ ՀՇՏՄԿՊ հանձնաժողովի աշխատակիցների մասնակցության համար համատեղ ուղիների փնտրում և հնարավորության դեպքում մասնակցության ապահովում.

6. Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող տնտեսական մրցակցության թեմաներով վերապատրաստման դասընթացներին և սեմինար պարապմունքներին ԼՂՀ ՀՇՏՄԿՊ հանձնաժողովի աշխատակիցների մասնակցության ապահովում.

7. ՀՀ ՏՄՊՊ և ԼՂՀ ՀՇՏՄԿՊ հանձնաժողովների նիստերին հանձնաժողովի նախագահների, հանձնաժողովի անդամների և (կամ) աշխատակազմի ղեկավարների մասնակցության ապահովում.

8. տնտեսական մրցակցության պաշտպանությանը վերաբերող հարցերի քննարկման նպատակով աշխատանքային խմբերի ստեղծում և փոխայցելությունների միջոցով ուսումնասիրությունների իրականացում.

9. ՀՀ ՏՄՊՊ և ԼՂՀ ՀՇՏՄԿՊ հանձնաժողովների աշխատակիցների մասնակցությամբ համատեղ ուսումնասիրությունների, վարույթների, դիտանցումների և ստուգումների իրականացում և գործնական օժանդակության ցուցաբերում.

10. Հայաստանի Հանրապետությունում առաջին անհրաժեշտության ապրանքների մանրածախ գների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում.

11. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ապրանքային շուկաներում հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկությունների փոխանակում.

12. ՀՀ ՏՄՊՊ հանձնաժողովի կողմից նյութատեխնիկական բազայի և նոր տեխնոլոգիաների ներդրման մասնագիտական գործում աջակցություն.

13. ՀՀ ՏՄՊՊ և ԼՂՀ ՀՇՏՄԿՊ հանձնաժողովների գործունեության, համատեղ աշխատանքների, ինչպես նաև երկու պետությունների տնտեսական մրցակցության ոլորտի օրենսդրության վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովում ՀՀ ՏՄՊՊ և ԼՂՀ ՀՇՏՄԿՊ հանձնաժողովների պաշտոնական ինտերնետային կայքերում.

14. ՀՀ ՏՄՊՊ և ԼՂՀ ՀՇՏՄԿՊ հանձնաժողովների տրամադրության տակ առկա տեղեկատվական բազաների տրամադրում.

15. ԼՂՀ ՀՇՏՄԿՊ հանձնաժողովների աշխատակիցների մասնակցության ապահովում ՀՀ ՏՄՊՊ հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրություններին և վարույթներին.

16. ՀՀ ՏՄՊՊ և ԼՂՀ ՀՇՏՄԿՊ հանձնաժողովների աշխատակիցների մասնակցությամբ կլոր սեղան ձևաչափով գործարարների հետ համատեղ քննարկումների կազմակերպում՝ իրազեկվածության բարձրացման և ոլորտային խնդիրները բացահայտելու նպատակով.

17. ՀՀ ՏՄՊՊ և ԼՂՀ ՀՇՏՄԿՊ հանձնաժողովների աշխատակիցների մասնակցության ապահովում հանձնաժողովների՝ դատական կարգով բողոքարկվող որոշումների վերաբերյալ դատական նիստերին.

18. աշխատանքային համագործակցության արդյունավետության բարձրացման նպատակով հանձնաժողովների ներկայացուցիչների նշանակում ՀՀ-ում և ԼՂՀ-ում՝ ըստ անհրաժեշտության.

19. ՀՀ ՏՄՊՊ և ԼՂՀ ՀԾՏՄԿՊ հանձնաժողովների կողմից համատեղ աշխատանքային ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների ամփոփման և նոր համատեղ աշխատանքային ծրագրի հաստատման նպատակով Հանձնաժողովների նախագահների մասնակցությամբ համատեղ նիստի անցկացում և լուսաբանում.

20. ՀՀ ՏՄՊՊ և ԼՂՀ ՀԾՏՄԿՊ հանձնաժողովների համատեղ կատարած աշխատանքների վերաբերյալ տեղեկագրի հրապարակում:

Հայաստանի Հանրապետության
տնտեսական մրցակցության
պաշտպանության պետական
հանձնաժողովի նախագահ

Ա. ՇԱԲՈՅԱՆ



Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հանրային ծառայությունները և տնտեսական
մրցակցությունը կարգավորող պետական
հանձնաժողովի նախագահ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

